Հավելված №2
Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
2017 թվականի մայիսի 31-ի N218Ն որոշման

ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ

ք. Երևան 07.09 2017 թվական
(կնքման վայրը)

Մատակարարը՝ "Հայաստանի Էլեկտրական Ցանցեր" ՓԲԸ
"Կենտրոն" ՏՀ տնօրինություն
(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը)

ի դեմս տնօրեն Դ. Ղազինյանի,
(անունը, ազգանունը, պաշտոնը, լիազորված լինելու դեպքում լիազորագրի տվյալները)

որը գործում է լիազորագրի հիման վրա, մի կողմից,
(գործունեությունը կարգավորող փաստաթղթի անվանումը)

անձ AM0469634 14.10.16 004

և Սպառողը՝ Ա. Ա. Մ. [illegible],
(անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները, իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը, ներկայացուցչի անունը, ազգանունը, պաշտոնը, լիազորված լինելու դեպքում լիազորագրի տվյալները)

մյուս կողմից, համատեղ կոչվելով Կողմեր, ղեկավարվելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) հաստատած՝ էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոններով (այսուհետ՝ ԷՄՕԿ), սույն պայմանագրով և այլ իրավական ակտերով, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1. Սույն պայմանագրի համաձայն Մատակարարը պարտավոր է Սպառողին մատակարարել էլեկտրական էներգիա, իսկ Սպառողը՝ վճարել մատակարարված էլեկտրական էներգիայի դիմաց:

2. ԿՈՂՄԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2. Կողմերը ղեկավարվում են «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով, ԷՄՕԿ-ով, սույն պայմանագրով և այլ իրավական ակտերով:

3. **Մատակարարը պարտավոր է՝**

1) Գ. Նժդեհ 31

hասցեում Սպառողին մատակարարել Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով սահմանված որակի էլեկտրական էներգիա՝ համաձայն սույն պայմանագրի №1 հավելվածով սահմանված տեխնիկական պայմանների և (կամ) №2 հավելվածով սահմանված էլեկտրամատակարարման միագիծ սխեմայի:

2) ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետում հանրապետական սփռման առնվազն մեկ հեռուստաընկերության միջոցով հայտարարել նախորդ ամսվա ընթացքում Սպառողի կողմից սպառված էլեկտրական էներգիայի քանակի և արժեքի մասին սույն կետի 3-րդ ենթակետով նախատեսված սպասարկման կետերում տեղեկատվությունը հասանելի դարձնելու օրը.

3) նախորդ ամսվա ընթացքում Սպառողի սպառած էլեկտրական էներգիայի քանակի և արժեքի մասին տեղեկատվությունը տեղակայել իր հետ պայմանագիր կնքած Հայաստանի Հանրապետությունում գործող բանկերի, վճարահաշվարկային կազմակերպությունների, փոստային բաժանմունքների սպասարկման կետերում՝ ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետում և կարգով.

4) ապահովել առևտրային հաշվառքի սարքի վրա Սպառողի կողմից դրված կնիքի ամբողջականությունը.

5) Սպառողի դիմումի հիման վրա ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետում և կարգով ստուգել Սպառողի առևտրային հաշվառքի սարքի ճշտությունը և Սպառողին ներկայացնել եզրակացություն.

6) իր միջոցների հաշվին կատարել առևտրային հաշվառքի սարքի աշխատանքի ճշտության ստուգման հետ կապված բոլոր ծախսերը, բացառությամբ ԷՄՕԿ-ով նախատեսված դեպքերի,

7) ԷՄՕԿ-ով սահմանված դեպքերում և ժամկետում ստուգել և ճշգրտել էլեկտրոնային առևտրային հաշվիչի ժամերը, այնպես, որ դրանք ճշգրիտ հաշվառեն Հանձնաժողովի կողմից սահմանված՝ գիշերային և ցերեկային ժամերին սպառված էլեկտրաէներգիայի քանակությունները.

8) առևտրային հաշվառքի սարքի աշխատանքի ճշտության ստուգում իրականացնելու դեպքում այդ մասին ԷՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետում զգուշացնել Սպառողին՝ համաձայնեցնելով ստուգման ժամկետները.

9) Սպառողի դիմումի հիման վրա կամ իր նախաձեռնությամբ ԷՄՕԿ-ով սահմանված դեպքերում և կարգով փոխարինել Սպառողի առևտրային հաշվառքի սարքը և համապատասխան փոփոխություն կատարել սույն պայմանագրում.

10) շուրջօրյա գործող 080000180 կամ 180 հեռախոսահամարով Սպառողի դիմելու դեպքում Սպառողին տրամադրել տեղեկատվություն կամ պարզաբանում վերջինիս հարցադրումների՝ ներառյալ էլեկտրամատակարարման ընդհատումների, դաղարեցումների պատճառների և վերականգնման ժամկետների, սպառած էլեկտրական էներգիայի արժեքի և քանակության, վճարման ժամկետների, Մատակարարի և Սպառողի իրավունքների ու պարտականությունների և այլնի վերաբերյալ.

11) ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետում սպառիչ կերպով պատասխանել Սպառողի բանավոր դիմումին՝ բանավոր, գրավոր դիմումին՝ գրավոր, իսկ էլեկտրոնային փոստով ստացված դիմումին՝ էլեկտրոնային փոստի միջոցով.

12) Սպառողին տեղեկացնել էլեկտրամատակարարման պլանային և արտապլանային ընդհատումների ու վերականգնման ժամկետների մասին՝ ԷՄՕԿ ով սահմանված ժամկետում և կարգով.

13) Սպառողի դիմումի հիման վրա առևտրային (վերստուգիչ) հաշվիչի էլեկտրական էներգիայի հաշվառման և վերահսկման ավտոմատացված համակարգում վերջինիս համար բացել անձնական էջ և տրամադրել մուտքի անուն և գաղտնաբառ.

4. **Մատակարարն իրավունք ունի՝**

1) Սպառողից պահանջել վճարելու սպառած էլեկտրական էներգիայի դիմաց սույն պայմանագրով, ԷՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետում.